

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 30-06-2025 թ. որոշմամբ
«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱԹՈՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ՝
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը	«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱԹՈՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ	
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 67 ՇԵՆՔ, «ՌԻՓԱԲԼԻՔ» ԲԻԶՆԵՍ 3Հ304	
1.3 Պետական գրանցման համարը	222.160.1247299	
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2022-06-27	
1.5 ՀՎՀՀ-ն	02868166	
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)77112920	
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	https://tatoyanfoundation.org/	
1.8 Էլեկտրոնային փոստը	inna.markosyan90@gmail.com	
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Արման Թաթոյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	5	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Բրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված	11,123,920

	«Արտակարգ աջակցություն Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց» ծրագրի շրջանակներում փաստահավաք առաքելություններ և խորհրդատվական ծառայություններ	2,006,400
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված	24,915,460
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	3,528,000	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվություններ/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
«Արտակարգ աջակցություն Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց» ծրագրի շրջանակներում փաստահավաք առաքելություններ և խորհրդատվական ծառայություններ	2,006,400	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	49,095,508	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	49,095,508	

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն
իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 25 էջերից:
էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

**Իրավունքի և արդարության կենտրոն «Թաթոյան»
հիմնադրամ**

Ֆինանսական հաշվետվություններ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Երևան

2025

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Չուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10



ՓԻ-ԷՋ-ՓԻ Փարթներզ ՓԲԸ
PHP Partners CJSC

Իրավաբանական հասցե՝ ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 15ա
Registration address: 15a Alek Manukyan, Yerevan
Գործունեության հասցե՝ ՀՀ, Երևան, Ադոնցի 2, Երազ բիզնես կենտրոն
Activity address: 2 Adonts str., Yeraz Business Centre, Yerevan, Armenia

Հեռ. (+374)10204090
Tel.
Էլ-փոստ general@php.am
E-mail

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Իրավունքի և արդարության կենտրոն «Թաթյան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Հաշվետվություն ֆինանսական հաշվետվությունների աուդիտի վերաբերյալ

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Իրավունքի և արդարության կենտրոն «Թաթյան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2024թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, գուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության նշանակալի մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԿ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՄԿ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի հաշվետվություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խեղամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Մենք նաև՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի պատճառով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- հասկանում ենք ներքին հսկողության համակարգն այնքանով, որքանով դա վերաբերում է աուդիտի առաջադրանքին՝ նախագծելու աուդիտի ընթացակարգերն այնպես, որ դրանք տեղին լինեն կոնկրետ հանգամանքներում, սակայն ոչ Հիմնադրամի ներքին հսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի՝ ղեկավարության կողմից կիրառման տեղին լինելը և հիմնվելով հավաքագրված աուդիտորական ապացույցների վրա գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն այն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրակացնենք, որ առկա է էական անորոշություն, մենք պետք է ուսումնասիրենք ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումները, իսկ եթե այդ բացահայտումները համապատասխան չեն, ապա աուդիտի եզրակացությունում պետք է ձևավորվեն մեր կարծիքը: Մեր կողմից ներկայացվող եզրակացությունները հիմնված են աուդիտորական ապացույցների վրա, որոնք ձեռք են բերվել մինչև աուդիտի հաշվետվության ամսաթիվը: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող է խթանել Հիմնադրամի՝ անընդհատության հիմունքի կիրառումը:

- երբ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են ճշմարիտ ներկայացման հիմունքի համաձայն, գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը՝ ներառյալ բացահայտումները, և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են հիմքում ընկած գործառնությունները և դեպքերն այնպես, որ ապահովի ճշմարիտ ներկայացում:
- Ի լրումն այլ հարցերի, կառավարման լիազոր անձանց հետ քննարկում ենք աուդիտի ընդգրկման շրջանակը և ժամկետը, ինչպես նաև նշանակալի բացահայտումները, ներառյալ՝ աուդիտի ընթացքում մեր կողմից հայտնաբերած ներքին հսկողության համակարգի նշանակալի թերությունները:


Հովհաննես Պետրոսյան
Տնօրեն




Լիլիթ Մինասյան
Աուդիտորական ծառայությունների
ղեկավար

ՓԻ-ԷՅՋ-ՓԻ Փարթնըրզ ՓԲԸ
30 հունիսի 2025թ.

**Իրավունքի և արդարության կենտրոն «Թագոյան» հիմնադրամ
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

’000 ՀՀ դրամ	Ծնթգ.	2024թ.	2023թ.
Ստացված նվիրատվություններից եկամուտ		39,567	33,644
Ստացված շնորհներից եկամուտ		5,016	2,136
Ծառայությունների մատուցումից հասույթ		-	4,003
Իրականացված ծրագրերի ինքնարժեք	5	(44,561)	(38,546)
Ծառայությունների մատուցման ծախսեր	6	-	(3,447)
Համախառն հավելուրդ/(պակասուրդ)		22	(2,210)
Վարչական ծախսեր	7	(4,249)	(4,852)
Ֆինանսական ծախս		(1,226)	(2,559)
Այլ եկամուտ	8	3,129	1
Այլ ծախսեր	9	(2,430)	(33)
Պակասուրդ նախքան հարկումը		(4,754)	(9,653)
Ծահույթահարկի գծով ծախս		(428)	-
Ցարվա պակասուրդ		(5,182)	(9,653)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-
Համապարփակ ֆինանսական արդյունք		(5,182)	(9,653)

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2025 թվականի հունիսի 30-ին և ստորագրվել են վերջինիս անունից.

Արման Թաթոյան
Տնօրեն



Իննա Մարկոսյան
Գլխավոր հաշվապահ

'000 ՀՀ դրամ	Ծնթգ.	2024թ. դեկտեմբերի 31	2023թ. դեկտեմբերի 31
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	10	4,608	5,798
Ոչ նյութական ակտիվներ	11	1,496	1,690
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	12	6,280	12,559
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		12,384	20,047
Ընթացիկ ակտիվներ			
Դեբիտորական պարտքեր		90	1
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13	5,001	9,881
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		5,091	9,882
Ընդամենը ակտիվներ		17,475	29,929
ՉՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
ՉՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ			
Կուտակված հավելուրդ		2,076	7,258
Ընդամենը զուտ ակտիվներ		2,076	7,258
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորություն	12	-	7,120
		-	7,120
Ընթացիկ պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորություն	12	7,120	6,308
Եկամուտներին վերաբերող շնորհներ	14	3,335	6,344
Կրեդիտորական պարտքեր	15	4,944	2,899
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		15,399	15,551
Ընդամենը պարտավորություններ		15,399	22,671
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		17,475	29,929

’000 ՀՀ դրամ	Կուտակված հավելուրդ	Ընդամենը զուտ ակտիվներ
Մնացորդը առ 01 հունվարի 2023թ	16,911	16,911
Ժամանակահատվածի համապարփակ ֆինանսական արդյունք		
Տարվա պակասուրդ	(9,653)	(9,653)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	(9,653)	(9,653)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	7,258	7,258
Մնացորդը առ 01 հունվարի 2024թ	7,258	7,258
Ժամանակահատվածի համապարփակ ֆինանսական արդյունք		
Տարվա պակասուրդ	(5,182)	(5,182)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	(5,182)	(5,182)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	2,076	2,076

Իրավունքի և արդարության կենտրոն «Թաղոյան» հիմնադրամ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

’000 ՀՀ դրամ

ԳՈՐԾԱՌԱՎԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Որպես նվիրատվություն ստացված դրամական միջոցներ

39,567

30,228

Որպես շնորհ ստացված դրամական միջոցներ

2,007

8,480

Մատուցված ծառայությունների դիմաց ստացված դրամական միջոցներ

-

3,975

Վճարումներ աշխատակիցներին

(21,333)

(24,428)

Վճարումներ մատակարարներին

(9,021)

(4,430)

Վճարված հարկեր

(8,916)

(8,556)

Այլ մուտքեր

351

-

Այլ

(1)

(34)

Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից

2,654

5,235

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հիմնական միջոցների ձեռքբերում

(2,687)

(30)

Հիմնական միջոցների օտարում

2,687

-

Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում

-

-

Դրամական միջոցների հոսքեր օգտագործված ներդրումային գործունեությունում

-

(30)

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Վարձակալության գծով վճարումներ, մայր գումար

(6,308)

(5,410)

Վճարված տոկոսներ

(1,208)

(2,107)

Դրամական միջոցների հոսքեր օգտագործված ֆինանսավորման գործունեությունում

(7,516)

(7,517)

Դրամական միջոցների և դրանց

համաժեքների զուտ նվազում

(4,862)

(2,312)

Դրամական միջոցները և դրանց համաժեքները

9,881

12,618

Ժամանակահատվածի սկզբի դրությամբ

Փոխանակման փոխարժեքի փոփոխության

ազդեցությունը դրամական միջոցների և դրանց

համաժեքների վրա

(18)

(425)

Դրամական միջոցները և դրանց

համաժեքները ժամանակահատվածի վերջի

դրությամբ (ծնթ. 11)

5,001

9,881

1 Նախապատմություն

(ա) Կազմակերպությունը և հիմնական գործունեությունը

Իրավունքի և արդարության կենտրոն «Թաթոյան» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադիրների կամավոր գույքային վճարների հիման վրա 2022թ. հունիսի 27-ին ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է:

Հիմնադրամը հետապնդում է ժողովրդավարության և իրավունքի գերակայության ամրապնդման, մարդու անձնական, սոցիալ-տնտեսական և մյուս իրավունքների պաշտպանության և խթանման, կոռուպցիայի դեմ պայքարին նպաստելու, երկրի անվտանգության ապահովմանը նպաստելու, գիտական և հետազոտական, կրթական և վերլուծական, սոցիալ-մշակութային և հանրային կյանքի առաջընթացի, բարեգործական, ազգային ինքնության պահպանման և Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների իրավունքների նկատմամբ հարգանքի, երկրում հանրային համերաշխության ու փոխադարձ հարգանքի, բոլոր մակարդակներում առաքինության որակների, ազգային ու պետական առաքելությունների համադրմամբ առաջընթացի, Հայկական սփյուռքի հետ կապերի շարունակական ամրապնդման և (կամ) այլ հանրօգուտ նպատակներ:

Հիմնադրամը հետապնդում է նաև 2020թ. 44-օրյա պատերազմի հետևանքների չեզոքացմանը և հանրային ու պետական առաջընթացին նպաստելու, պատերազմի հետևանքով տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության, միջազգային ատյաններում Հայաստանի ու Արցախի շահերի պաշտպանության, այդ նպատակով փաստահավաք աշխատանքների ու աղբյուրազնային խախտումների շարունակական փաստագրման նպատակներ:

Հիմնադրամի հիմնադիրներն են Արման Թաթոյանը, Տաթևիկ Թոփյանը, Սոնա Հայրապետյանը և Նարեկ Բալարեկյանը:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Հիմնադրամի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող ընկերությունների համար: Բացի այդ, 2020 թվականի սեպտեմբերին Արցախում զինված հակամարտության բռնկումը, որին հաջորդեց Արցախի վիճելի տարածքների շուրջ կրակի դադարեցման պայմանավորվածությունը, հետագայում Հայաստանի Հանրապետության տարածքում հակամարտության սրումը, ավելի է մեծացրել գործարար միջավայրում անորոշությունը:

Ուկրաինայում պատերազմի արդյունքում շատ առաջատար երկրներ և տնտեսական միություններ հայտարարել են խիստ տնտեսական պատժամիջոցներ Ռուսաստանի և Բելառուսի դեմ՝ ներառյալ ռուսական բանկեր, այլ կազմակերպություններ և անհատներ: Պատերազմի սկզբից ի վեր ռուսական ռուբլու զգալի անկայունություն է նկատվել արտարժույթի նկատմամբ, ինչպես նաև Ռուսաստանի և այլ շուկաներում ցուցակված ռուսական ընկերությունների արժեթղթերի արժեքի զգալի կորուստ: Իրավիճակը դեռ շարունակվում է, բայց դա արդեն իսկ հանգեցրել է հումանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների Ուկրաինայում, Ռուսաստանում և մնացած աշխարհում: Ուկրաինան և Ռուսաստանը Հայաստանի կարևոր առևտրային գործընկերներն են:

Պատերազմի հետևանքով ոչ ռեզիդենտների (հատկապես Ռուսաստանից) ներհոսք եղավ Հայաստան՝ նպաստելով Ռուսաստանից, Ուկրաինայից և Բելառուսից դրամական մուտքերի ծավալների զգալի ավելացմանը և քարտային գործարքների ակտիվացմանը, ինչը դրական ազդեցություն ունեցավ Հայաստանի տնտեսության վրա՝ արդյունքում գրանցելով երկնիշ աճ և ընդհանուր առմամբ ավելացրեց եկամուտը: Հիմնադրամի ղեկավարությունը վերահսկում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Զանի որ պատերազմը դեռ շարունակվում է, անհնար է արժանահավատորեն գնահատել այն վերջնական ազդեցությունը, որն այն կարող է ունենալ Հիմնադրամի գործունեության վրա, քանի որ տնտեսության վրա, ընդհանուր առմամբ, դրա ազդեցության մեծության վերաբերյալ անորոշություն կա:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2 Պատրաստման հիմունքները

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

(բ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է (դրամ): Դրամը հանդիսանում է Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթը և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ների համաձայն պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք գնահատումներ և դատողություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական քաղաքականության կիրառման և ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ճանաչված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և դրանց համար հիմք հանդիսացող ենթադրությունները կանոնավոր կերպով վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, երբ գնահատումները վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա ազդեցություն ունեն:

Ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա առավելագույն էական ազդեցություն ունեցող հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ ծանոթագրությունում:

- Ծանոթագրություն 10 – հիմնական միջոցներ, օգտակար ծառայության ժամկետների գնահատումներ,
- Ծանոթագրություն 11 – ոչ նյութական ակտիվներ, օգտակար ծառայության ժամկետների գնահատումներ:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ներքոնշյալ հաշվապահական քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջաններում:

(ա) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են համապատասխան ֆունկցիոնալ արժույթների գործարքների օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով արտարժույթի փոխարկումից օգուտը կամ վնասը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթի ամորտիզացված արժեքի՝ ճշգրտված ժամանակաշրջանի ընթացքում արդյունավետ տոկոսի և վճարումների գծով, և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված արտարժույթի ամորտիզացված արժեքի միջև տարբերությունն է:

Իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:

Փոխարկման հետևանքով առաջացած արտարժույթային տարբերությունները ճանաչվում են շահույթ կամ վնասում՝ բացառությամբ վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների գծով փոխարժեքային տարբերությունների, որոնք ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

(բ) Ֆինանսական գործիքներ

Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Հիմնադրամի դերհոլդերական պարտավորությունները և դրամական միջոցները ու դրանց համարժեքները հանդիսանում են ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ:

Հիմնադրամը դերհոլդերական պարտքերը և դրամական միջոցները ու դրանց համարժեքները սկզբնապես ճանաչվում է դրանց առաջացման օրը:

Հիմնադրամն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցվում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Մասնակցությունը փոխանցված ակտիվում, որն առաջացել կամ պահպանվել է Հիմնադրամի կողմից, ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև՝ հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Ֆինանսական ակտիվների սկզբնական դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվի պայմանագրային դրամական հոսքերի բնութագրից և հիմնադրամի դրանց կառավարման քիզնես մոդելից:

Հիմնադրամի ֆինանսական ակտիվները չափվում են ամորտիզացվող արժեքով:

Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ

Հիմնադրամի կրեդիտորական պարտավորությունները հանդիսանում են ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունները և սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ դրանց առաջացման օրը:

Հիմնադրամն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:

Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի բոլոր ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(գ) Հիմնական միջոցներ

Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստը:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, աշխատուժի ծախսումները, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված այլ արտադրական ծախսումները, հիմնական միջոցների ապամոնտաժման և շահագործումից հանման ու տեղանքի վերականգնման

ծախսումները և որակավորված ակտիվների ձեռքբերմանը կամ կառուցմանը վերաբերող փոխառության ծախսումները: Ձեռքբերված ծրագրային ապահովման արժեքը, որը հանդիսանում է հիմնական միջոցի ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես այդ հիմնական միջոցի բաղկացուցիչ մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (խոշոր բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը կամ վնասը ճանաչվում են այլ եկամուտների/այլ ծախսերի կազմում շահույթ կամ վնասում:

Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Հիմնադրամ և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կատարվելու պես:

Մաշվածություն

Մաշվածության հաշվարկը հիմնված է ակտիվի սկզբնական արժեքի և մնացորդային արժեքի վրա:

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում բացառությամբ այն դեպքերի, երբ մաշվածության ծախսումները ներառվում են այլ ակտիվի հաշվեկշռային արժեքում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համեմատական ժամանակաշրջանների համար հետևյալն են.

- Համակարգչային տեխնիկա՝ 2-3 տարի
- Գրասենյակային գույք՝ 2-8 տարի

(դ) Ոչ նյութական ակտիվներ

Չափումը ճանաչման պահին

Ոչ նյութական ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով:

Ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքը ներառում է՝

ա) դրա գնման գինը՝ ներառյալ ներկրման տուրքերն ու գնման չփոխհատուցվող հարկերը՝ առևտրային զեղչերը և արտոնությունները հանելուց հետո.

բ) ակտիվն իր նպատակային օգտագործման վիճակին բերելու հետ կապված ցանկացած ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Հետագա չափում

Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվը հաշվառվում է իր սկզբնական արժեքով (հաշվի առած հետագա ավելացվող ծախսումները)՝ հանած ցանկացած կուտակված ամորտիզացիա և ցանկացած կուտակված արժեզրկումից կորուստ:

Ամորտիզացիա

Ամորտիզացիան պետք է հաշվարկվի այն պահից, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար՝ հետևյալ օգտակար ծառայությունից ելնելով.

- Համակարգչային ծրագիր՝ 10 տարի
- Այլ՝ 10 տարի

Ոչ նյութական ակտիվի մնացորդային արժեքը գնահատվում է զրո, իսկ ամորտիզացիայի հաշվարկման կիրառվող մեթոդն է գծային մեթոդը:

(ե) Պաշարներ

Պաշարները ներկայացված են սկզբնական արժեքի և իրացման գույք արժեքի նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հիմնված է առաջին մուտք առաջին ելքի վրա և ներառում է պաշարների ձեռքբերման, տրանսպորտային ծախսումները, մաքսային վճարները, ինչպես նաև պաշարները ներկա գտնվելու վայր և ներկա վիճակի բերելու հետ կապված ծախսումները:

Իրացման գույք արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման ենթադրվող ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները:

(զ) Արժեզրկում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արժեզրկման անկողմնակալ վկայություն հայտնաբերելու նպատակով: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե անկողմնակալ վկայությունը ցույց է տալիս, որ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել կորստի դեպք, և այդ կորստի դեպքը բացասական ազդեցություն է ունեցել տվյալ ֆինանսական ակտիվի ապագա գնահատված դրամական հոսքերի վրա, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների (ներառյալ բաժնային արժեթղթերի) արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտականությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը պարտապանի կողմից, Հիմնադրամին վճարվելիք գումարի պայմանների այնպիսի վերանայում, որը Հիմնադրամն այլ հանգամանքներում չէր դիտարկի, պարտապանի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեթղթի ակտիվ շուկայի վերացումը:

Ամորտիզացիոն արժեքով չափվող ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստները հաշվարկվում է որպես հաշվեկշռային արժեքի և ապագա դրամական հոսքերի ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույթով գեղջման ներկա արժեքի տարբերություն: Կորուստները ճանաչվում է շահույթ կամ վնասում և արտահայտում են դեբիտորական պարտքերի նկատմամբ ձևավորված պահուստների հաշվում:

Ոչ ֆինանսական ակտիվներ

Հիմնադրամը ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են ակտիվների փոխհատուցվող գումարները: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը գեղջվում են՝ օգտագործելով մինչև հարկումը գեղջման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին բնորոշ ռիսկերը: Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք առաջացնում են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր (‘դրամաստեղծ միավոր’):

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթ կամ վնասում, եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է վերջիններիս փոխհատուցվող գումարը: Դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստը, այդ միավորի ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազեցնելու նպատակով, բաշխվում է նախ դրամաստեղծ միավորին բաշխված գույքիլին, այնուհետև՝ դրամաստեղծ միավորի (միավորների խմբի) այլ ակտիվներին՝ համամասնական հիմունքով:

Նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ բացահայտելու, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի արժեզրկումից կորուստը հնարավոր է, որ այլևս գոյություն չունի կամ նվազել է: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինեք առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլինեք:

(Է) Ծառայությունների մատուցումից հասույթ

Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է, երբ (կամ այնքանով, որքանով) Հիմնադրամը կատարում (բավարարում) է կատարման պարտականությունը՝ խոստացված ապրանքը կամ ծառայությունը (այսինքն՝ ակտիվը) փոխանցելով գնորդին:

Հիմնադրամի կողմից մատուցվող ծառայություններից առաջացնում է ժամանակի ընթացքում կատարվող պարտականություններ: Յուրաքանչյուր կատարման պարտականության համար Հիմնադրամը ճանաչում է ժամանակի ընթացքում հասույթը՝ չափելով այդ կատարման պարտականության ամբողջությամբ կատարման առաջընթացը (աստիճանը):

(ը) Շնորհներ

Դոնոր կազմակերպություններից ստացված միջոցների հաշվառումն իրականացվում է ՀՀՄՍ 20 Պետական շնորհներ ստանդարտի հիման: Շնորհները կազմակերպությունների և պետական մարմինների կողմից ռեսուրսների փոխանցումներն են Հիմնադրամին՝ Հիմնադրամի գործառնական գործունեությանը վերաբերող որոշակի պայմաններին անցյալում կամ ապագայում համապատասխանության դիմաց: Հիմնադրամի ակտիվները ֆինանսավորվում են շնորհներով, որոնք կարող են նաև փոխանցվել ոչ դրամային ակտիվի տեսքով: Ոչ դրամային ակտիվների տեսքով ստացված վերաբերող շնորհները ներկայացվում են իրենց անվանական արժեքով:

Հիմնադրամը ճանաչում է ակտիվներին վերաբերող շնորհները՝ որպես հետաձգված եկամուտ, որը ամորտիզացվում է ակտիվի օգտակար ծառայության ընթացքում: Հետաձգված եկամուտը սովորաբար դասակարգվում է որպես ոչ ընթացիկ պարտավորություններ: Այն մասը, որը հաջորդ տարի պետք է ճանաչվի եկամուտ, ներկայացվում է ընթացիկ պարտավորություններում:

Հիմնադրամը ներկայացնում է եկամուտներին վերաբերող շնորհները՝ օգտագործելով համախառն մոտեցումը:

(թ) Ծախսեր

Ծախսերը ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում երբ տեղի են ունենում:

(ժ) Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Ֆինանսական եկամուտը ներառում է տոկոսային եկամուտը: Տոկոսային եկամուտը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում հաշվեգրվելուն պես՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(ի) Ծախսաշարի

Ընթացիկ հարկ

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Հիմնադրամն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի:

Ը) Վարձակալություն

Հիմնադրամը՝ որպես վարձակալ

Հիմնադրամը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը ներառում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական գումարը՝ ճշգրտված վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարների մասով, գումարած կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումները և հիմքում ընկած ակտիվի ապատեղակայման և քանդման, կամ վերջինիս վերականգնման, կամ դրա զբաղեցրած տեղանքի վերականգնման գնահատված ծախսումները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումները:

Հետագայում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով՝ վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև ժամկետի ավարտը, եթե վարձակալությամբ Հիմնադրամը չի փոխանցվում հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին, կամ եթե ակտիվի օգտագործման իրավունքի արժեքը չի արտացոլում, որ Հիմնադրամը կիրագործի գնման օպցիոնը: Այդ դեպքում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ընթացքում, որը որոշվում է նույն հիմունքով, որը կիրառվում է հիմնական միջոցների համար: Բացի այդ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվը պարբերաբար նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով, վերջիններիս առկայության դեպքում, և ճշգրտվում է վարձակալության գծով պարտավորության որոշ վերաչափումների մասով:

Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք չեն վճարվել մեկնարկի ամսաթվին՝ զեղչված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, կամ Հիմնադրամի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով, եթե այդ դրույքը չի կարելի հեշտությամբ որոշել: Որպես կանոն, Հիմնադրամը որպես զեղչման դրույք կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Հիմնադրամը որոշում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, հիմք ընդունելով տարբեր արտաքին ֆինանսական աղբյուրներից ստացված տոկոսադրույքները, և կատարում է որոշ ճշգրտումներ արտացոլելու համար վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Վարձակալության գծով պարտավորությունը չափվում է ամորտիզացված արժեքով:

Հիմնադրամը որոշել է չճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ փոքրարժեք ակտիվների և կարճաժամկետ վարձակալությունների, այդ թվում՝ փոխադրամիջոցների վարձակալության համար: Այս վարձակալությունների հետ կապված վարձավճարներն Հիմնադրամը ճանաչում է գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

4 Դեռևս չընդունված նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Նոր և փոփոխված ստանդարտներն ու մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են, բայց դեռևս ուժի մեջ չեն մտել, գնահատվում են Հիմնադրամի կողմից՝ ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը որոշելու համար: Ինչպես նկարագրված է վերոնշյալ հատվածում, այն ներառելու է ստանդարտներ և փոփոխություններ, որոնք արդեն ունի մեջ կլինեն՝ հիմնված նոր ստանդարտների կամ փոփոխությունների վրա, սակայն տեղական մակարդակով հաստատումը դեռևս ընթացքի մեջ է կամ կարող է հանգեցնել ավելի ուշ ուժի մեջ մտնելու:

ԺՀՄՄ 18 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում

2024 թվականի ապրիլին ՀՀՄՄԻ -ն հրապարակել է ՀՀՄՄ 18 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում ստանդարտը, որը փոխարինում է ՀՀՄՄ 1 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում ստանդարտին: ՀՀՄՄ 18-ը նոր պահանջներ է ներկայացնում շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ներկայացման գծով՝ ներառյալ որոշ հանրագումարներ և միջանկյալ հանրագումարներ:

Ավելին, կազմակերպությունները պարտավոր են շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտներն ու ծախսերը դասակարգել՝ ըստ հինգ կատեգորիաների՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, շահութահարկ, ընդհատված գործառնություններ, որոնցից առաջին երեք կատեգորիաները նոր են:

Այն նաև պահանջում է նոր, ղեկավարության կողմից սահմանած կատարողականի չափորոշիչների, եկամուտների և ծախսերի միջանկյալ հանրագումարների բացահայտում և ներառում է ֆինանսական տեղեկատվության համախմբման և տարանջատման նոր պահանջներ՝ հիմնված հիմնական ֆինանսական հաշվետվությունների (PFS) և ծանոթագրությունների «դերերի» վրա:

Բացի այդ, ՀՀՄՄ 7 Դրամական հոսքերի մասին հաշվետվություն ստանդարտում կատարվել են նեղ շրջանակի փոփոխություններ, որոնք ներառում են գործառնություններից դրամական հոսքերի՝ անուղղակի մեթոդով որոշելու մեկնարկային կետի փոփոխություն՝ «շահույթ կամ վնաս»-ից դեպի «գործառնական շահույթ կամ վնաս» և շահաբաժիններից ու տոկոսագումարներից դրամական հոսքերի դասակարգման ընտրության հնարավորության վերացում: Ավելին, որոշակի համապատասխան փոփոխություններ են կատարվել մի քանի այլ ստանդարտներում:

ՀՀՄՄ 18 ստանդարտը և այլ ստանդարտների փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է, սակայն անհրաժեշտ է բացահայտում: ՀՀՄՄ 18-ը կիրառվելու է հետընթաց: Ներկայումս Խումբն աշխատում է բացահայտել այն բոլոր ազդեցությունները, որոնք փոփոխությունները կունենան հիմնական ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների վրա:

- **Փոփոխություններ ՀՀՄՄ 7 և ՀՀՄՄ 7 ստանդարտներում** – Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ: Ընկերությունը ներկայումս գնահատում է այն ազդեցությունը, որը փոփոխությունը կունենա հիմնական ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների վրա;
- **ՀՀՄՄ 21 ստանդարտի փոփոխություններ** - Փոխանակելիության բացակայություն, որը հստակեցնում է, թե ինչպես պետք է կազմակերպությունը գնահատի՝ արդյոք արտարժույթը փոխանակելի է, և ինչպես պետք է որոշել սփոթ փոխարժեքը փոխանակելիության բացակայության դեպքում: Ակնկալվում է, որ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա;

5 Իրականացված ծրագրերի ինքնարժեք

’000 ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Աշխատակիցների հատուցումներ	29,218	27,578
Մաշվածություն և ամորտիզացիա	8,097	8,133
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	3,446	310
Հիմնական միջոցների նորոգման և սպասարկման զծով ծախսեր	1,831	377
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	1,472	1,123
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	54	46
Այլ	443	979
	44,561	38,546

6 Ծառայությունների մատուցման ծախսեր

’000 ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Աշխատակիցների հատուցումներ	-	2,956
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	-	309
Մաշվածություն և ամորտիզացիա	-	182
Գործուղման ծախսեր	-	-
	-	3,447

7 Վարչական ծախսեր

’000 ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Աշխատակիցների հատուցումներ	2,279	1,800
Գործուղման ծախսեր	1,142	1,800
Աուդիտ	360	360
Մաշվածություն և ամորտիզացիա	122	146
Բանկային ծախսեր	107	488
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	-	95
Այլ	239	163
	4,249	4,852

8 Այլ եկամուտներ

’000 ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Հիմնական միջոցների օտարումից եկամուտներ	2,687	-
Այլ	442	1
	3,129	1

9 Այլ ծախսեր

’000 ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Հիմնական միջոցների օտարումից ծախսեր	2,429	-
Տրված նվիրատվություն	-	33
Այլ	1	-
	2,430	33

10 Հիմնական միջոցներ

’000 ՀՀ դրամ

Սկզբնական արժեք

Մնացորդն առ 01 հունվարի 2023թ.

Ավելացումներ

Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2023թ.

Մնացորդն առ 01 հունվարի 2024թ.

Ավելացումներ

Օտարումներ

Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2024թ.

Մաշվածություն

Մնացորդն առ 01 հունվարի 2023թ.

Տարվա ծախս

Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2023թ.

Մնացորդն առ 01 հունվարի 2024թ.

Տարվա ծախս

Օտարումներ

Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2024թ.

Զուտ հաշվեկշռային արժեք

Առ 31 դեկտեմբերի 2022թ.

Առ 31 դեկտեմբերի 2023թ.

Առ 31 դեկտեմբերի 2024թ.

Համակարգչային
տեխնիկա

Գրասենյակային
գույք

2,525

3,197

-

30

2,525

3,227

2,525

3,227

-

-

-

-

2,525

3,227

431

185

1,222

579

1,653

764

1,653

764

818

559

-

-

2,471

1,323

2,094

3,012

872

2,463

54

1,904

2024 թվականի ընթացքում հիմնական միջոցների մաշվածության ծախսերը 93 հազար ՀՀ դրամ (2023թ.՝ 1 վարչական ծախսերում, 1,653 հազար ՀՀ դրամ (2023թ.՝ 1,701 հազար ՀՀ դրամ)՝ ծրագրերի իրականացման հազար ՀՀ դրամ)՝ ծառայությունների մատուցման ծախսերում:

11 Ոչ նյութական ակտիվներ

’000 ՀՀ դրամ	Հաշվապահական ծրագիր	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք			
Մնացորդն առ 01 հունվարի 2023թ.	285	1,650	1,935
Ավելացումներ	-	-	-
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2023թ.	285	1,650	1,935
Մնացորդն առ 01 հունվարի 2024թ.	285	1,650	1,935
Ավելացումներ	-	-	-
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2024թ.	285	1,650	1,935
Մաշվածություն			
Մնացորդն առ 01 հունվարի 2023թ.	10	41	51
Տարվա ծախս	29	165	194
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2023թ.	39	206	245
Մնացորդն առ 01 հունվարի 2024թ.	39	206	245
Տարվա ծախս	29	165	194
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2024թ.	68	371	439
Զուտ հաշվեկշռային արժեք			
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	275	1,609	1,884
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	246	1,444	1,690
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	217	1,279	1,496

2024 թվականի ընթացքում ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան 29 հազար ՀՀ դրամ (2023թ.՝ 25 հազար ՀՀ դրամ) գումարով ճանաչվել է վարչական ծախսերում, 165 հազար ՀՀ դրամ (2023թ.՝ 153 հազար ՀՀ դրամ)՝ ծրագրերի իրականացման ինքնարժեքում, 0 ՀՀ դրամ (2023թ.՝ 16 հազար ՀՀ դրամ)՝ ծառայությունների մատուցման ծախսերում:

12 Վարձակալություն

(ա) Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ

’000 ՀՀ դրամ	2024թ. դեկտեմբերի 31	2023թ. դեկտեմբերի 31
Մնացորդն առ 1 հունվարի	12,559	-
Ավելացումներ	-	18,838
Մաշվածություն	(6,279)	(6,279)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի	6,280	12,559

(բ) Ծախսերում կամ վնասում ճանաչված գումարներ

’000 ՀՀ դրամ	2024թ. դեկտեմբերի 31	2023թ. դեկտեմբերի 31
Վարձակալության գծով պարտավորությունների տոկոսներ	1,208	2,107
	1,208	2,107

(դ) Վարձակալության գծով պարտավորությունների շարժի և դրամական հոսքերի համադրում

‘000 ՀՀ դրամ	2024թ. դեկտեմբերի 31	2023թ. դեկտեմբերի 31
Մնացորդն առ 1 հունվարի	13,428	-
Նոր վարձակալություն	-	18,838
Վարձակալության մայր գումարի վճարումներ	(6,308)	(5,410)
Տոկոսային ծախս	1,208	2,107
Վճարված տոկոսներ	(1,208)	(2,107)
	7,120	13,428

13 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

‘000 ՀՀ դրամ	2024թ. դեկտեմբերի 31	2023թ. դեկտեմբերի 31
Ընթացիկ հաշիվներ	4,743	9,596
Սառեցված հաշիվ	10	10
ՀՀ ՊԵԿ-ում միասնական հաշիվ	248	275
	5,001	9,881

Հիմնադրամի ենթարկվածությունը վարկային ռիսկին բացահայտված է ծանոթագրություն 16-ում:

14 Եկամուտներին վերաբերող շնորհներ

‘000 ՀՀ դրամ	2024թ. դեկտեմբերի 31	2023թ. դեկտեմբերի 31
Թուֆենկյան բարեգործական հիմնադրամ	3,335	3,335
Հայկական Կարիտաս բարեսիրական ՀԿ	-	3,009
	3,335	6,344

15 Կրեդիտորական պարտքեր

‘000 ՀՀ դրամ	2024թ. դեկտեմբերի 31	2023թ. դեկտեմբերի 31
Աշխատակիցներին հատուցումների գծով	3,344	1,155
Պետական բյուջեին	1,158	1,281
Ստացված ծառայությունների և նյութերի գծով	442	463
	4,944	2,899

Հիմնադրամի ենթարկվածությունը իրացվելիության ռիսկին բացահայտված է ծանոթագրություն 16-ում:

16 Ֆինանսական գործիքներ և ռիսկերի կառավարում

(ա) Ամփոփ ներկայացում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Հիմնադրամը ենթարկվում է հետևյալ ռիսկերի.

- վարկային ռիսկ,
- իրացվելիության ռիսկ,
- շուկայական ռիսկ:

Սույն ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն վերը նշված յուրաքանչյուր ռիսկին Հիմնադրամի ենթարկվածության մասին, ինչպես նաև ռիսկերի չափման և կառավարման հետ կապված Հիմնադրամի նպատակները, քաղաքականությունը և գործընթացները: Հետագա քանակական բացահայտումները ներառված են սույն ֆինանսական հաշվետվություններում:

(բ) Ռիսկերի կառավարման հիմունքներ

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Հիմնադրամի ռիսկերի կառավարման համակարգի ներդրման, ինչպես նաև հետագա փոփոխման համար: Ղեկավարությունը չի ստեղծել վերահսկող ֆորմալ մարմին, որը պատասխանատու է ռիսկերի կառավարման համար, սակայն գոյություն ունի ռիսկերի կառավարման որոշակի քաղաքականություն, որը նպատակ ունի ապահովել երկարաժամկետ հատվածում Հիմնադրամի կենսունակությունը և գործունեության առավելագույն արդյունավետությունը: Հիմնադրամի տնօրենը պատասխանատու է Հիմնադրամի ռիսկերի կառավարման քաղականության մշակման և վերահսկման համար:

(գ) Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու Հիմնադրամի ռիսկն է, եթե գնորդը կամ ֆինանսական գործիքի կիրառության մյուս կողմը չկարողանա կատարել իր պայմանագրային պարտավորությունները: Այն հիմնականում առաջանում է Հիմնադրամի կողմից դեբիտորական պարտքերի և բանկերում գտնվող ժամկետային ավանդի ու ընթացիկ հաշիվների առնչությամբ:

i. Ընթացիկ հաշիվներ

Հիմնադրամը ենթարկվում է վարկային ռիսկի բանկերում ներդրված ընթացիկ հաշիվների և դրանց գծով հաշվեգրված, բայց չվճարված տոկոսագումարների առնչությամբ:

Ենթարկվածությունը վարկային ռիսկին

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը վարկային ռիսկին: Ստորև ներկայացված է վարկային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետու ամսաթվի դրությամբ:

	Հաշվեկշռային արժեք 2024թ. դեկտեմբերի 31	Հաշվեկշռային արժեք 2023թ. դեկտեմբերի 31
'000 ՀՀ դրամ		
Ընթացիկ հաշիվներ	4,743	9,596
Սառեցված հաշիվ	10	10
ՀՀ ՊԵԿ-ում միասնական հաշիվ	248	275
	5,001	9,881

(գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Հիմնադրամը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Հիմնադրամի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման մոտեցումն է մշտապես ապահովել հնարավորինս բավարար իրացվելիություն պահանջվող ժամկետներում պարտավորությունները մարելու համար՝ թե սովորական, թե արտասովոր պայմաններում՝ առանց անընդունելի վնասների հանգեցնելու կամ Հիմնադրամի համբավը վտանգի ենթարկելու:

31 դեկտեմբերի 2024թ.

հազ. դրամ	Հաշվեկշռ. արժեք	Պայմանագր. դրամական հոսքեր	Մինչև 2 ամիս	2-12 ամիս	1-2 տարի
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ Վարձակալության գծով պարտավորություն Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	7,120 3,786	7,517 3,786	1,253 3,786	6,264 -	7,517 -

31 դեկտեմբերի 2024թ.	Հաշվեկշռ. արժեք	Պայմանագր. դրամական հոսքեր	Մինչև 2 ամիս	2-12 ամիս	1-2 տարի
հազ. դրամ	10,906	11,303	5,039	6,264	7,517

31 դեկտեմբերի 2023թ.	Հաշվեկշռ. արժեք	Պայմանագր. դրամական հոսքեր	Մինչև 2 ամիս	2-12 ամիս	1-2 տարի
հազ. դրամ					
Ոչ անմանցյալ Ֆինանսական պարտավորություններ					
Վարձակալության գծով պարտավորություն	13,428	15,034	1,253	6,264	7,517
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	1,618	1,618	1,618	-	-
	15,046	16,652	2,871	6,264	7,517

(դ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկերը շուկայական գների, օրինակ, արտարժույթի, փոփոխության հետևանքով Հիմնադրամի եկամուտների կամ դրա ակտիվների արժեքի վրա հնարավոր ազդեցության ռիսկերն են: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել ընդունելի սահմաններում այս ռիսկին ենթարկվածության աստիճանը՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

i. Արժույթային ռիսկ

Գործառնական գործունեություններ իրականացնելիս՝ Խումբն ենթարկվում է արտարժույթային ռիսկի, երբ ստանում է նիվրատվություններ, որոնք արտահայտված են արտարժույթով (ԱՄՆ դոլար, Եվրո և ՌԴ ռուբլի):

Ենթարկվածությունը արտարժույթային ռիսկին

Ստորև ներկայացված է Հիմնադրամի ենթարկվածությունը արտարժույթային ռիսկին՝ ելնելով պայմանական գումարներից:

’000 ՀՀ դրամ	2024թ. դեկտեմբերի 31	2023թ. դեկտեմբերի 31
ԱՄՆ դոլարով արտահայտված Ֆինանսական ակտիվներ	116	-
Եվրոյով արտահայտված Ֆինանսական ակտիվներ	44	-
	160	-

Տարվա ընթացքում կիրառվել են ստորև ներկայացված հիմնական փոխարժեքները:

’000 ՀՀ դրամ	2024թ. դեկտեմբերի 31	2023թ. դեկտեմբերի 31
Տարեվերջի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը համարժեք է	396.56	404.79
Տարեվերջի դրությամբ 1 Եվրոն համարժեք է	413.89	447.90

Զգայունության վերլուծություն

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի ամրապնդումը (թուլացումը) հետևյալ արժույթների հանդեպ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Այս վերլուծությունն հիմնված է Խմբի կողմից հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ խելամտորեն ակնկալվող արտարժույթի փոխարժեքների

փոփոխության մակարդակի վրա: Այս վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

’000 ՀՀ դրամ	Չուտ ակտիվներ	Չուտ հավելուրդ/ պակասուրդ
2024թ.		
ԱՄՆ դոլար (5% ամրապնդում)	6	6
Եվրո (5% ամրապնդում)	2	2
2023թ.		
ԱՄՆ դոլար (5% ամրապնդում)	-	-
Եվրո (5% ամրապնդում)	-	-

ՀՀ դրամի թուլացումը նշյալ արժույթների նկատմամբ դեկտեմբերի 31-ի դրությամբ մյուս բոլոր փոփոխականների հաստատուն մնալու դեպքում կունենա գումարային նույն, սակայն հակառակ ազդեցությունը:

17 Պայմանական դեպքեր և պարտավորվածություններ

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռևս չեն կիրառվում Հայաստանում: Հիմնադրամն չի ապահովագրել իր գույքը կամ երրորդ կողմի պատասխանատվությունը գույքի և շրջակա միջավայրի նկատմամբ, որոնք կարող են առաջանալ պատահարներից կամ Հիմնադրամի գործունեությունից: Մինչ Հիմնադրամի կողմից համարժեք ապահովագրական ծածկույթ ձեռք բերելը, գոյություն ունի ռիսկ, որ որոշ ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործառնությունների և ֆինանսական վիճակի վրա:

(բ) Դատական վեճեր

Հաշվետու ամսաթվի դրությամբ, Հիմնադրամը ներգրավված չէ որևէ նշանակալի դատական գործերում և հայցերում:

(գ) Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, ոլորտը կարգավորող ՀՀ կառավարության որոշումների, պաշտոնական պարզաբանումների և այլ իրավական ակտերի հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր մեկնաբանությունների և տարընթերցումների առարկա են: Հարկային վարչարարությունն իրականացվում է տարբեր պետական և համայնքային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել խիստ տույժեր և տուգանքներ:

Այս փաստերը Հայաստանում, այլ երկրների համեմատությամբ, կարող են ավելի մեծ և էական հարկային ռիսկեր առաջացնել: Դեկլարությունը գտնում է, որ իր հարկային պարտավորությունները գնահատել է ՀՀ հարկային օրենսդրության՝ իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

18 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Վերահսկողություն

Հիմնադրամի վերջնական վերահսկող կողմ է հանդիսանում հոգաբարձուների խորհուրդը, որը նախագահում է պարոն Արման Թաթյանը:

(բ) Գործարքներ ղեկավարության հետ

i. Ղեկավարության վարձատրություն

Ստորև ներկայացված է ղեկավար անձնակազմի վարձատրությունը, որը ներառված է Իրականացված ծրագրերի ինքնարժեքի (ծանոթագրություն 5) և Ծառայությունների մատուցման ծախսերի մեջ (ծանոթագրություն 6):

'000 ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Տնօրեն	10,544	7,306
	10,544	7,306

(գ) Գործարքներ հիմնադիրների հետ

'000 ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.	2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.	2023թ.
	Գործարքի մնացորդ	Գործարքի արժեք	Գործարքի մնացորդ	Գործարքի արժեք
Վճարված վարձատրություն	-	2,206	-	7,087
Ստացված նվիրատվություն	-	3,528	-	4,105
	-	5,734	-	11,192

19 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

2025 թվականի հունվար-հունիս ամիսներին Հիմնադրամը ստացել է 40,755 հազար ՀՀ դրամ նվիրատվություն: